21.06. Սրբուհի Ե Սեդրակ

Ստեփանավանի թիվ 2 հիմնական դպրոցի
5-րդ <<բ>> դասարանի դասղեկի 2022-23 ուստարվա
ընթացքում կատարած դասղեկական աշխատանքների

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Դասղեկ՝ Մարինե Վիրաբյան

Դասարանի աշակերտների թիվ	20
Տղաներ	11
Աղջիկներ	9
ԿԱՊԿՈՒ	3
Գարազանցիկներ	4
Առաջավորներ	5
Դասարանի որակը	45%
Դասարանի առաջադիմություն	100%

Դասարանի նկարագիրը

Տարեսկզբին դասարանում սովորում էր քսան աշակերտ: Դեկտեմբեր ամսին մեկ աշակերտ /Մելքոնյան Ալբերտ/ մեկնեց ՌԴ: Մարտ ամսին մեկ աշակերտ /Մուրադյան Արսեն/ վերադարձավ: Այսպիսով տարեվերջին աշակերտների քանակը մնաց անփոփոխ: Դասարանի գերազանցիկներին են՝ Գրիգորյան Մարինա, Հովհաննիսյան Սոֆի, Եգանյան Եվա, Տոնոյան Ազնիվ:

Դասարանում ձևավորված է առողջ դասարանական կոլեկտիվ,որտեղ հարգվում են բոլորի իրավունքները,իսկ պարտականությունների կատարումը դիտվում է որպես բնականոն գործընթաց:Դասարանը համախմբված է,ակտիվ է,մասնակից է համադպրոցական բազմաբնույթ միջոցառումների: Ուստարվա սկզբին կրթադաստարակչական աշխատանքները սկսվեցին աշակերտների մոտ տարիքային փոփոխությունների ուսումնասիրմամբ:Այդ նպատակով անցկացվել են ծնողական ժողովներ,զրույցներ աշակերտների հետ՝նպատակ ունենալով սերմանել սեր և հարգանք միմյանց նկատմամբ,ինչպես նաև հետևել դպրոցի ներքին կարգապահական կանոններին:Դասարանում ակնհայտ է դպրոցի և ընտանիքի միասնական պահանջների ապահովման գործընթացը: Ուստարվա ընթացքում դաստիարակչական աշխատանքները իրագործվել են հոգևոր, գեղագիտական, ռազմահայրենասիրական, ֆիզիկական, աշխատանքային, բնապահպանական ուղղությամբ: Դասղեկական ժամերը անցկացվել են համաձայն հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի, ինչպես նաև ընդգրկվել են հոգեբանական թեմաներ՝ երեխաների ուշադրության, մտածողության, հիշողության զարգացման նպատակով:

Դասղեկական ժամերին զրույցներ են վարվել աշակերտների սոցիալականացմանն ուղղված թեմաներով, նրանց տարիքային առանձնահատկությունների, խառնվածքի տիպերի, բնավորության շեշտվածության, շփվողականության, կոնֆլիկտայնության բացահայտման վերաբերյալ անցկացվել են թեսթեր: Անցկացվել են դասալսումներ աշակերտների ուսումնական առաջադիմության, ակտիվության, դասարանում տիրող մթնոլորտի, ուսուցիչ-աշակերտ, աշակերտ-աշակերտ փոխհարաբերությունների ուսումնասիրման, խնդիրների բացահայտման ու կանխարգելման նպատակով:

Համագործակցային ու ամուր է նաև դասղեկ - ծնող կապը. երկուստեք բարձրաձայնվում են բոլոր տեսակի մտահոգությունները /ուսումնական, առողջական, վարքային, միջանձնային փոխհարաբերություններ, հաճախակի բացակայություններ/, քննարկվում, որոշվում լուծման

եղանակներ ու ճանապարհներ, ինչպես անհատական զրույցների, ծնողական հանդիպումների, այնպես էլ տնայցերի միջոցով:

Միջոցառումներ և բաց դասեր

Դասարանը մասնակցում է դպրոցական «Մինի այգի» ծրագրին: Միրով և աշխատասիրությամբ մշակել իրեն տրամադրված հողատարածքը, ցանքս է կատարել: Հողի մշակումը կրում է շարունակական բնույթ և ամռան ընթացքում նախատեսվում է այցելել այգի մշակել և խնամել այն:

Դասարանը ապրիլի յոթին իրականացրեց մայրիկներին նվիրված հրաշալի միջոցառումը, որը հուզիչ էր, ազդեցիկ և տպավորիչ: Երեխաները իրենց կատարումներով զարմացրեցին բոլորին:

Մայիս ամսին իրականացվեց բաց դասղեկական դաս դատավարության տեսքով: Թեման ընտրվել էր ըստ ծրագրի պահանջների: Պիտի երեխաները նբերկայացնեին ցանվող բանջարեղենատեսակները:

Մայիսի վերջին դասարանը արշավ մեկնեց դեպի «Ալեա», այցելեց Մշակույթի պալատում կազմակերպված ցուցահանդեսին:

Դասարանը ակտիվ մասնակցել է դպրոցում կազմակերպված բոլոր համադպրոցական միջոցառումներին: Աշակերտներն ակտիվ մասնակցում են նաև արտադպրոցական միջոցառումների և մրցույթների՝ գրանցելով հաղթանակներ և հաջողություններ:

Տարեվերջին կազմակերպվեց շաբաթօրյակ, աշակերտները մաքրեցին դասարանը, սեղաններն ու աթոռները և մեկնեցին արձակուրդ:

Հունիսին մեկնեց էքսկուրսիա Օշական, Զվարթնոց, Մատենադարան ուղղությամբ: